



Հայաստանի Հանրապետությունում ռադիոյի և հեռուստատեսության թվային համակարգի ներդրման գնահատումը՝ իրավական և գործնական հետևանքների տեսանկյունից

1. ՀՀ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքը

Հայաստանի Հանրապետությունում հեռուստառադիոընկերությունների գործունեությունը կարգավորվում է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով (Օրենք): Օրենքն ընդունվել է 2000 թվականի հոկտեմբերի 9-ին և մինչև 2009 թվականի սեպտեմբեր ամիսը Օրենքում կատարվել է տասներկու փոփոխություն և/կամ լրացում, որոնցից հեռարձակման թվայնացման տեսանկյունից առավել ուշագրավ է 2008 թվականի սեպտեմբերի 10-ին 59-րդ հոդվածում կատարված լրացումը (ՀՕ-137-Ն): Հիշյալ լրացման օրինագիծը մշակվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից և ընդունվել ԱԺ արտահերթ նիստում:

2. Օրենքի լրացման պատճառներն ու հետևանքները

Համաձայն ՀՕ-137-Ն լրացման, մինչև 2010 թվականի հուլիսի 20-ը կասեցվել է հեռուստառադիոհեռարձակման լիցենզավորման մրցույթների անցկացումը: Օրենքի այդ լրացումը պաշտոնապես հիմնավորվում է ՀՀ-ում հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման թվային համակարգի ներդրման անհրաժեշտությամբ: Օրենքի լրացումը թե տեղական և թե միջազգային մի շարք կառույցների կողմից արժանացել է քննադատության, ինչը պայմանավորված է մի շարք հանգամանքներով:

1. Նախևառաջ Օրենքի լրացումը կատարվել է առանց շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունների, ինչպես նաև հանրային քննարկումներ անցկացնելու, ինչն իր հերթին հակասում է իրավական որոշակիության սկզբունքին, քանի որ մորատորիումն անկանխատեսելի մթնոլորտ է ստեղծել տնտեսվարող սուբյեկտների շրջանակներում և պարզ չէ անգամ, թե ինչ է սպասվում մոտ ապագայում:
2. Վերջինս պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ թվային համակարգի ներդրման գործընթացը սկսվել է առանց որևէ հայեցակարգային և/կամ ռազմավարական փաստաթղթի առկայության, ինչը թելադրված է ԵԽ նախարարների

կոմիտեի անդամ երկրներին ուղղված (2003)9 հանձնարարականում¹: Այնինչ, թվային համակարգին անցում կատարած առաջադեմ երկրների փորձը ցույց է տալիս, որ հեռարձակման թվային համակարգը ներդրվում է նախևառաջ հանրային քննարկումների արդյունքում ձևավորված ճանապարհային քարտեզի կամ հայեցակարգի հիման վրա, ինչն իր հերթին տնտեսվարող սուբյեկտների համար ապահովում է շուկայի կանխատեսելիությունը և իրավական որոշակիությունը:

3. Օրենքի լրացման հետևանքով, փաստորեն, ընդհատվում է նոր մասնակիցների մուտքը շուկա: Համաձայն մի շարք տեղական և միջազգային անկախ փորձագետների պնդումների, որոնք հասցեագրվել են ՀՀ իշխանություններին, տվյալ երկրում հեռարձակման դաշտի բավականին բազմակարծիք և բազմազան չլինելու դեպքում անհրաժեշտ է հետաձգել թվային համակարգի ներդրումը և առաջին հերթին՝ իրականացնել այլ բարեփոխումներ: Համաձայն ԵԽ (2003)9 հանձնարարականի՝ «առանց բազմակարծություն ու բազմազանություն ապահովելու՝ թվային համակարգին անցնելը վաղաժամ է»: Նույն կարծիքն է արտահայտել նաև եվրոպացի անկախ փորձագետը՝ նշելով. «Քանի որ որոշ ժամանակ նոր լիցենզիաներ չեն տրվելու, ապա շատ կարևոր է, որ թվային համակարգ ներմուծելու պահին գոյություն ունենա ԶԼՄ-ների բազմակարծություն և բազմազանություն», ինչն ըստ նրա, Հայաստանում չկա:
4. Համաձայն մի շարք կազմակերպությունների և փորձագետների պնդումների՝ մորատորիումի նպատակը նոր և մասնավորապես Ա1+ հեռուստաընկերությանը լիցենզիա տրամադրելու կանխումն է: Ի լրումն, վերջինիս լույսի ներքո, անհնարին է դառնում առնվազն մոտ ապագայում Հայաստանի կողմից 2008 թվականին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացրած որոշման կատարումը, որով ճանաչվել էր Ա1+ հեռուստաընկերության խոսքի ազատության իրավունքի խախտման փաստը:
5. Այսպիսով, համաձայն Օրենքի 59-րդ հոդվածի. «Մինչև 2010 թվականի հուլիսի 20-ը հեռուստառադիոհեռարձակման լիցենզավորման մրցույթներ չեն հայտարարվում: Այն հեռուստաընկերությունները, որոնց լիցենզիայի գործողության ժամկետը լրանում է մինչև 2011 թվականի հունվարի 21-ը, կարող են լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման հայտ ներկայացնել Ազգային հանձնաժողով» (Մեպտեմբեր ամսվա դրությամբ ներկայացված հայտերի համաձայն երկարաձգվել են 13 հեռուստաընկերությունների հեռարձակման լիցենզիաները): Չնայած այն հանգամանքին, որ մրցույթների անցկացումը կասեցվել է մինչև 2010 թվականի հուլիսի 20-ը, Օրենքի լրացման հետևանքով մինչև 2011 թվականի հունվարի 21-ը փաստորեն կասեցվում է հեռարձակման լիցենզիայի 24 մրցույթների անցկացումը, քանի որ 10 հեռուստաընկերություն Երևանում և 14 հեռուստաընկերություն ՀՀ մարզերում² մրցույթին մասնակցելու փոխարեն պետք է երկարաձգեն իրենց լիցենզիաների ժամկետները:

¹ԵԽ Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված թիվ Rec (2003)9 հանձնարարականը՝ **թվային հեռարձակման ժողովրդավարական և սոցիալական մասնակցությունը խթանելու միջոցառումների վերաբերյալ** (Հավելված, կետ 1)

² Երևանում՝ «Հայկական երկրորդ հեռուստաալիք», «Արմենիա Թի-Վի» հեռուստաընկերություն, «ԱՐ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ», «Արմնյուզ» հեռուստախմբագրություն, «Է. Վ.» հեռուստախմբագրություն, «Երևան - Պրոմթթևս» հեռուստաստուդիայի խմբագրություն, Դար-21» հեռուստաընկերության խմբագրություն, «ԹԻ ՎԻ 5» հեռուստախմբագրություն, «Ա-ԹԻՎԻ» ՄՊ ընկերություն, «Երկիր Մեդիա» հեռուստախմբագրություն:

Մարզերում՝ «STV1» հեռուստատեսության խմբագրություն, «Լոռի թի-վի» հեռուստաընկերության խմբագրություն, «Անկյուն գումարած 3» հեռուստաընկերության խմբագրություն, «6 + 6» հեռուստախմբագրություն, Լուսավիք»

Նշենք, որ չնայած այն հանգամանքին, որ ռադիոհաճախականությունների տիրույթը սահմանափակ ռեսուրս է, համաձայն «Հեռուստատեսության և ռադիոյի» մասին ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի. «Ազգային հանձնաժողովը՝ ըստ անհրաժեշտության, բայց տարին առնվազն մեկ անգամ, հրապարակում է հաճախականությունների ամբողջական ցանկը և հայտարարում ազատ (չզբաղեցված) հաճախականությունների մրցույթ: Բոլոր ազատ հաճախականությունների միաժամանակյա մրցույթը պարտադիր չէ»: Այդուամենայնիվ, 2006 թվականից ի վեր Հայաստանի ողջ տարածքով հաճախականությունների մրցույթ չի հայտարարվել, ինչը միայն Երևան քաղաքի պարագայում կարող է բացատրվել հաճախականությունների ծանրաբեռնվածությամբ: **Այսինքն, յուրաքանչյուր տարի հանձնաժողովը պարտավոր է հրապարակել հաճախականությունների ամբողջական ցանկը, իսկ եթե առկա են ազատ հաճախականություններ, ապա պարտավոր է վերջիններիս համար հայտարարել մրցույթ: Նշենք նաև, որ հաճախականությունների ամբողջական ցանկը հասանելի է Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կայքում³, որտեղ սակայն ազատ հաճախականությունների վերաբերյալ որևէ տեղեկատվություն գտնել չհաջողվեց:**

3. Միջազգային կազմակերպությունների արձագանքը

Օրենքի 59-րդ հոդվածի փոփոխությանն են անդրադարձել նաև մի շարք միջազգային կազմակերպություններ:

Ի թիվս այլոց, ԵԱՀԿ ԶԼՄ-ների ազատության հարցերով ներկայացուցիչ Միկլոշ Հարաշտին ՀՀ Նախագահին ուղղված իր նամակում նշել է⁴, որ «Եթե մինչև 2010 թվականը կասեցվի հնարավոր հեռարձակողների մուտքը շուկա, ապա Հայաստանի հեռարձակման ոլորտում սահմանափակ բազմակարծությունը էլ ավելի կնվազի», ավելացնելով, որ թվային հեռարձակում ներդնելիս նոր լիցենզիաների տրամադրման կասեցումը առաջին քայլը չէ, որ անհրաժեշտ է իրականացնել: Այն դեպքում, երբ երկրում հեռարձակման դաշտը բավականին բազմակարծիք և բազմազան չէ անհրաժեշտ է հետաձգել թվային համակարգի ներդրումը և առաջին հերթին իրականացնել այլ բարեփոխումներ:

ԵԱՀԿ-ի անկախ փորձագետ Քետրին Նայման-Մետկալֆը՝ հղում կատարելով ԵՆ նախարարների կոմիտեի (2003)9 Հանձնարարականին նշել է, որ. «Հանձնարարականը կողմ է արտահայտվում արագ անցմանը դեպի թվային հեռարձակման համակարգ, սակայն նշում է, որ դա պետք է արվի՝ հաշվի առնելով հանրության և բոլոր հեռարձակողների շահերը: Դրա համար անհրաժեշտ է ապահովել համապատասխան իրավական դաշտ (հայեցակարգ/ռազմավարություն), ինչպես նաև բարենպաստ տեխնիկական և տնտեսական պայմաններ: **Նույնիսկ եթե մորատորիումն անխուսափելի է, այն չպետք է կիրառվի բազմազանության աստիճանը նվազեցնելու հաշվին»:**

Հասկանալի է, որ նույն (2003)9 Հանձնարարականի հավելվածի 3-րդ կետում նշվում է, որ ի թիվս այլ հանրային շահերի պետք է հաշվի առնել ոչ առևտրային և

հեռուստաընկերություն խմբագրություն, «Ցայգ» հեռուստաստուդիայի խմբագրություն, «Շանթ» հեռուստաստուդիայի խմբագրություն, «Լաստ» հեռուստատեսության խմբագրություն, «Մյունիք» հեռուստախմբագրություն, «ՍՈՄԻ» հեռուստատեսության խմբագրություն, «Քամուտ» հեռուստախմբագրություն, «Քամուտ»ՄՊ ընկերություն, «Իջևան Ստուդիա» ՄՊ ընկերություն, «Քյավառ» հեռուստաստուդիայի խմբագրություն, «ՀԴԱԶԴԱՆ» հեռուստաընկերության խմբագրություն:

³ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը – www.tvradio.am

⁴ Armenia should lift moratorium on licensing broadcasters to ensure media pluralism, says OSCE media freedom representative: Ձեռք է բերվել հետևյալ կայքից՝ <http://www.osce.org/item/33196.html>: Մեպտեմբեր 19, 2009

մարզային հեռարձակողների շահերը, մասնավորապես ապահովել համապատասխան իրավական հիմքերն ու բարենպաստ տնտեսական և տեխնիկական պայմանները:

Բացի դա, ելնելով այն հանգամանքից, որ հեռարձակման ոլորտի կարգավորումը հանդիսանում է խոսքի և մամուլի ազատության կարևորագույն նախադրյալներից մեկը, ԵՄ Խորհրդարանական Վեհաժողովը իր 2008 թվականի 1609(2008) բանաձևում անդրադարձել է Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի և Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի կազմի ձևավորման իրավական ընթացակարգերի վերանայման անհրաժեշտությանը: Հատկանշական է, որ ԵՄ վեհաժողովի մեկ այլ՝ 2008 թվականի հունիսի 1620(2008) բանաձևը, Հայաստանին կոչ է անում **ապահովել «լիցենզավորման հրապարակային, արդար և թափանցիկ ընթացակարգ»:** ԵՄ «Ժողովրդավարական հաստատությունների գործառույթը Հայաստանում» 1677(2009) բանաձևում, ինչպես նաև «Հայաստանի կողմից Վեհաժողովի 1609(2008) և 1620(2008) բանաձևերի կատարման վերաբերյալ» 1643(2009) բանաձևի 10.2 կետում նշվում է, որ «Թվային հեռարձակման ներդրման համար անհրաժեշտ տեխնիկական պահանջները իշխանությունների կողմից չպետք է օգտագործվեն որպես արդարացում հեռարձակման լիցենզիաների բաց, արդար և թափանցիկ մրցույթների անցկացման անհարկի հետաձգման, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական որոշումը չկատարելու համար»:

Հողվածի լրացմանն արձագանքել է նաև մարդու իրավունքների պաշտպանությամբ, խոսքի ու տեղեկատվության ազատությամբ զբաղվող ազատ արտահայտման համաշխարհային «Article 19» կազմակերպությունը, որի պնդմամբ Օրենքի տվյալ լրացումն ուղղված է Ա1+-ի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ընդունված դատավճռի չկատարմանը: «Article 19»-ը իր զեկույցում քննադատում է նման մեխանիզմների կիրառումը և Հայաստանի կառավարությանը կոչ է անում վերացնել լիցենզավորման մորատորիումը, իսկ մինչ հեռարձակման թվային համակարգի անցումը ապահովել Ա1+-ի մասնակցությունը լիցենզավորման բաց, արդար և թափանցիկ մրցույթին: Կազմակերպությունը միաժամանակ նշում է, որ Օրենքի լրացումը հակասում է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային համաձայնագրի (ICCPR) 19-րդ հոդվածին, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածին, որոնք վավերացվել են Հայաստանի կողմից:

Ի տարբերություն վերոգրյալի, ԵՄ կողմից ֆինանսավորված անկախ վերլուծաբան Ալեք Թոմասը՝ Հայաստանում լիցենզավորման գործընթացի կասեցման վերաբերյալ հայտնել է երկիմաստ կարծիք. **«Հավանաբար տեխնիկական տեսանկյունից անալոգային հեռուստատեսության լիցենզիաների հետագա տրամադրումը, մասնավորապես Երևանում, նպատակահարմար չէ»⁵:**

Հատկանշական է այն, որ Օրենքի լրացումը քննադատվել է նաև ԱՄՆ Պետդեպարտամենտի 2009 թվականի փետրվարի 25-ի Մարդու իրավունքների մասին տարեկան զեկույցում, որտեղ նշվում է, որ Օրենքում տվյալ լրացումն ընդունվել է ԱԺ արտահերթ նիստում՝ առանց նախօրոք նախազուշացնելու և հանրային քննարկումներ անցկացնելու, որը և նվազեցնում է զանգվածային լրատվության բազմազանության և բազմակարծության հեռանկարը Հայաստանում:

⁵ Report on the utilisation of the UHF spectrum in the Republic of Armenia by Mr Alec Thomas, Legal and Human Rights Capacity Building Division, Strasbourg, 30 April 2009, Ձեռք է բերվել հետևյալ կայք էջից՝ <http://www.mineconomy.am/upload/file/UHF%20SPECTRUM.pdf>

4. Եզրակացություն

Այսպիսով, Հայաստանի համար Օրենքի 59-րդ հոդվածի լրացումը մի շարք բացասական հետևանքների պատճառ հանդիսացավ:

Նախևառաջ առանց հանրային քննարկումներ և շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցություններ անցկացնելու, ինչպես նաև առանց որևէ ռազմավարական փաստաթղթի առկայության Օրենքի նման լրացումը **իրավական անորոշության մթնոլորտ ստեղծեց շուկայի մասնակիցների մոտ**, ինչն իր բացասական ազդեցությունն ունեցավ ոչ միայն հեռուստաընկերությունների ներդրումային ծրագրերի, այլև ընդհանրապես վերջիններիս գործունեության և շուկայի ընդհանուր զարգացման վրա:

Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն փաստը, որ Հայաստանում զարգացող լրատվամիջոցների բազմակարծիք և բազմազան դաշտը դեռևս գտնվում է ձևավորման փուլում և հետևաբար Հայաստանի պարագայում հեռարձակման լիցենզիաների անհարկի հետաձգումը մոտ 2 տարով կանխեց ՁԼՄ-ների բազմազան դաշտի ձևավորման գործընթացը:

Վավերացնելով մի շարք միջազգային կոնվենցիաներ և համաձայնագրեր, մասնավորապես Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային համաձայնագիրը և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիան, Հայաստանը Օրենքի նման լրացման հետևանքով խախտում է վերջիններիս մեջ ամրագրված մի շարք դրույթներ, որի արդյունքում միջազգային ասպարեզում կորցնում է իր հանդեպ վստահությունը: Հատկանշական է նաև այն, որ նման լրացումը պատճառ հանդիսացավ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավճռի անհարկի չկատարման համար: ԵԽ 1609(2008), 1620(2008), 1677(2009) և 1643(2009) բանաձևերում ամրագրված դրույթների չիրականացումն իր հերթին կարող է Հայաստանի նկատմամբ սանկցիաների կիրառման պատճառ հանդիսանալ, ինչն իր հերթին խոչընդոտում է Հայաստան-ԵԽ արդյունավետ համագործակցությանը:

5-րդ հոկտեմբերի 2009 թ.